ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը հանրակրթական դպրոցների շրջանավարտներին

Հանրակրթական դպրոցների հարգելի շրջանավարտնե՛ր,
այսօր ձեր կյանքում ոչ միայն հրաժեշտի հուզումնալից ակնթարթ է, այլ նաև տոնական տրամադրություն ու այլևս անշրջելի իրադարձություն, որը դպրոցական հիշարժան տարիներից արդեն ձեզ առաջնորդելու է դեպի նոր միջավայր, նոր նպատակներ ու ձեռքբերումներ:

Համոզված եմ, որ ձեզանից յուրաքանչյուրն իր դպրոցից, դասարանից ու ուսուցիչներից վերցրել է բավարար դաստիարակություն և անհրաժեշտ գիտելիքներ՝ կյանքում արժանի տեղ գտնելու, դժվարությունները հաղթահարելու, երազանքներն ու նպատակներն իրականացնելու համար:

Ձեր մեջ ես վստահորեն տեսնում եմ մեր հայրենիքը կերտող, շենացնող ու հզորացնող մարդկանց, կյանքն ու շրջապատն ավելի գեղեցիկ, նորովի ու բովանդակալից դարձնող անհատներին:

Դուք արժանիորեն կդառնաք ուսանողներ, Հայոց բանակի զինվորներ, մասնագիտական աշխատանքում կայացած ու աչքի ընկնող անձնավորություններ, ամենակարևորը՝ Հայաստանի Հանրապետության պարտաճանաչ ու նվիրյալ քաղաքացիներ:

Վերջին զանգի կապակցությամբ սրտանց շնորհավորում եմ ձեզ, ձեր ուսուցիչներին ու ծնողներին, մաղթում ամենայն բարիք, անսահման երջանկություն, անսպառ հաջողություններ հետագա ուսումնառության, զինվորական ծառայության ու մասնագիտական աշխատանքի մեջ:

Լավագույն ցանկություններով՝
ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար
Հովհաննես Հովեյան